

հէին միշտ աստիճանի զանազանութիւնն ալ, «դասս ինն» (Մեսր. 39): Այս մեկուսացումը սակայն յատուկ էր լոկ արքունական ճաշերուն կամ համեմատաբար հին շրջաններուն: Վասն զի ուրիշ խնճոյից մէջ հայրապետը գահագլուխ կը բազմի, եւ բոլորը խառն կը նստին, նախ եկեղեցականք եւ յետոյ աշխարհականք: Այսպէս՝ Խորենացւոյ մասին միջնադարեան ծանօթ աւանդութեան համեմատ՝ Մանդակունւոյն խնճոյք կատարուեցաւ զիւղի մը մէջ, ուր «քահանայքն եւ իշխանքն առաջի հայրապետին էին նստեալ» (Հյպտ. 195):

Նիւշապհոյ մոզպետին ընթրեաց մէջ, զոր տուաւ մեր բանտարկեալ քահանայից եւ իշխանաց, հանգիսատես կը լինինք յուզիչ տեսարանի մը: Ղեւոնդեանց մէջ կար շինական տգէտ երէց մը՝ որ կարդալ անգամ չէր գիտեր, եւ իրենց հետ ի մահ կը զիմէր յօժարութեամբ: Խրախուսելու համար զինքը, Յովսէփ կաթողիկոս եւ ընկերներն հրամայեցին անոր «ունել ըզգլուխ բազմականին»: Միամիտ մարդը շփոթած այս նոր պատուէն, կ'ըսէր՝ թէ ես տգէտս «զիմորդ կարացից այդմ տանել»: այնքան մեծ էր իրենց համար կարգի նշանակութիւնը: Բայց ի վերջոյ տեղի